

### 4.3. Զբոսաշրջություն

#### 4.3.1. Միջազգային զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2012թ. հունվար-հունիսին հանրապետություն են ժամանել 281 034 զբոսաշրջիկներ<sup>1</sup> կամ 2011թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 5.1%: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 302 090 մարդ կամ 2011թ հունվար-հունիսի նկատմամբ ցուցանիշն աճել է 9.3%-ով:

#### Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ 2012-2011թթ.. հունվար-հունիսին

մարդ

	2011թ. հունվար- հունիս <sup>♦</sup>	2012թ. հունվար- հունիս	2012թ. հունվար-հունիսը 2011թ. հունվար-հունիսի նկատմամբ
<b>Հյուրանոցների քանակը</b> , որոնք ընդունել են միջազգային զբոսաշրջիկների	51	48	94.1
<b>Ժամանողներ</b>			
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ <sup>2</sup>	<b>267 352</b>	<b>281 034</b>	<b>105.1</b>
որոնցից տեղավորվել են՝			
հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում	52 455	61 968	118.1
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	214 897	219 066	101.9
<b>Մեկնողներ</b>			
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ <sup>2</sup>	<b>276 377</b>	<b>302 090</b>	<b>109.3</b>
որոնցից ուղևորությունը կազմակերպվել է			
<b>զբոսաշրջային գործակալությունների կողմից</b>	4 058	5 009	123.4
<b>ինքնուրույն</b>	272 319	297 081	109.1

Ըստ հյուրանոցային տնտեսություններից ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2012թ. հունվար-հունիսին ՀՀ այցելած զբոսաշրջիկների 20.5%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 36.9%-ը՝ ԵՄ երկրներին և 42.6%՝ այլ երկրներին:

<sup>1</sup>Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **միջազգային զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեն ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

<sup>2</sup>Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք են հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալությունից, իսկ 2011թ-ից՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոսը ՀՀ ԱՎԾ, Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության (ԶԶՀ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (ՄՄՀՀ) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:

ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ու աճի տեմպը 2011-2012թթ. հունվար-հունիսին <sup>1</sup>

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2011թ հունվար-հունիս <sup>2</sup>	2012թ. հունվար-հունիս	
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>118.1</b>
այդ թվում՝			
<b>ԱՊՀ երկրներ</b>	<b>19.5</b>	<b>20.5</b>	<b>124.1</b>
որից՝			
Ուկրաինա	2.1	1.9	104.4
Ռուսաստանի Դաշնություն	16.2	17.4	126.6
ԱՊՀ այլ երկրներ	1.2	1.3	124.8
<b>ԵՄ երկրներ</b>	<b>38.1</b>	<b>36.9</b>	<b>114.2</b>
որից՝			
Նիդերլանդներ	1.2	0.9	88.8
Իտալիա	5.6	5.4	113.6
Ֆրանսիա	8.9	8.0	106.8
Գերմանիա	6.4	5.3	97.6
Միացյալ Թագավորություն	5.9	9.1	181.6
ԵՄ այլ երկրներ	10.1	8.1	95.3
<b>Այլ երկրներ</b>	<b>42.3</b>	<b>42.6</b>	<b>118.9</b>
ԱՄՆ	14.6	12.7	102.8
Իրանի Իսլամական Հանրապետություն	9.2	8.9	115.3
Վրաստան	2.8	2.9	123.6
Թուրքիա	1.0	0.8	91.5
Կանադա	1.3	1.2	111.5
այլ երկրներ	13.5	16.0	140.5

Զբոսաշրջության ցուցանիշներն ըստ նպատակի

մարդ

	2011 թ. հունվար-հունիս	Տեսակարար կշիռը (2011թ. հունվար-հունիս,%)	2012 թ. հունվար-հունիս	Տեսակարար կշիռը (2012թ. հունվար-հունիս,%)
<b>Ժամանողներ<sup>2</sup></b>				
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ</b>	<b>52 455</b>	<b>100.0</b>	<b>61 968</b>	<b>100.0</b>
որոնցից ըստ նպատակի				
գործնական	15 276	29.1	17 073	27.6
հանգստի և ժամանցի	8 393	16.0	12 655	20.4
կրթության	16	0.0	19	0.0
բուժման	246	0.5	306	0.5
այլ	28 524	54.4	31 915	51.5
<b>Մեկնողներ<sup>2</sup></b>				
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ</b>	<b>4 058</b>	<b>100.0</b>	<b>5 009</b>	<b>100.0</b>
որոնցից ըստ նպատակի				
գործնական	449	11.1	607	12.1
հանգստի և ժամանցի	1 173	28.9	1 590	31.7
կրթության	5	0.1	42	0.8
բուժման	-	-	-	-
այլ	2 431	59.9	2 770	55.3

<sup>1</sup> Բերված տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում հաշվառված զբոսաշրջիկներին:

<sup>2</sup> Տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջային գործակալությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը: